

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մասնակցություն միջոցառումներին

- ✓ 2019թ. հուլիսի 2-3-ը ՀՀ ՎԿ գյուղատնտեսության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ռ. Վարդանյանը մասնակցել է ք. Վիլնյուսում (Լիտվա) կայացած Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների գյուղատնտեսության վիճակագրության վերաբերյալ աշխատանքային խորհրդակցությանը,
- ✓ 2019թ. հուլիսի 11-ին ՀՀ ՎԿ տնային տնտեսությունների վիճակագրության բաժնի պետ Լ. Մարկոսյանը և աշխատանքի վիճակագրության բաժնի տվյալների բազայի մասնագետ-տեխնիկ Ս. Ջեյնայանը մասնակցել են ք. Թբիլիսիում (Վրաստան) կայացած «Հողի սեփականությունը և վերահսկողությունը գենդերային հավասարության կարգավորող դաշտի ամրապնդման գործում» խորագրով սեմինարին,
- ✓ 2019թ. հուլիսի 15-19-ը ՀՀ ՎԿ մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետ Ս. Խաչատրյանը և առաջատար մասնագետ Մ. Խաչատրյանը մասնակցել են ք. Վիեննայում (Ավստրիա) կայացած «Ազգային հաշիվների կազմման և եռամսյակային ազգային հաշիվներ» թեմայով դասընթացին,
- ✓ 2019թ. հուլիսի 17-19-ը ՀՀ ՎԿ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Բանգկոկում (Թաիլանդ) կայացած Բնակչության և սոցիալական վիճակագրության հարցերով տարածաշրջանային համակարգող խմբի երկրորդ հանդիպմանը,
- ✓ 2019թ. հուլիսի 25-26-ը ՀՀ ՎԿ նախագահ Ս. Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը և ՀՀ ՎԿ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել են ք. Թբիլիսիում (Վրաստան) կայացած «Ըստ սեռի վիճակագրություն, Կայուն զարգացման նպատակների մշտադիտարկման մարտահրավերներ և հնարավորություններ» խորագրով Միջազգային կոնֆերանսին նվիրված Վրաստանի ազգային վիճակագրության գրասենյակի 100-ամյակին և ըստ սեռի վիճակագրության հավաքագրման 20-ամյակին,

- ✓ 2019թ. օգոստոսի 18-23-ը ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել է ք. Կուալա Լումպուրում (Մալայզիա) կայացած Միջազգային վիճակագրական ինստիտուտի (ISI) 62-րդ Համաշխարհային վիճակագրության Կոնգրեսին,
- ✓ 2019թ. օգոստոսի 20-22-ը ՀՀ ՎԿ նախագահի խորհրդական Դ. Մարտիրոսովան մասնակցել է ք. Իսիկ-Կուլում (Ղրղզստան) կայացած «Չթողնել ոչ մեկին հետևում. անհավասարություն և սոցիալական պաշտպանություն Հյուսիսային և Կենտրոնական Ասիայում» թեմայով մեկօրյա սեմինարին և «Կայուն զարգացման նպատակների բազմակողմ իրականացում» խորագրով համաժողովին,
- ✓ 2019թ. օգոստոսի 27-29-ը ՀՀ ՎԿ տնային տնտեսությունների վիճակագրության բաժնի պետ Լ. Մարկոսյանը, տնային տնտեսությունների ամբողջացված հետազոտության ղեկավար Ա. Խանգելյանը, տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ Կ. Եսայանը և «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASAT դրամաշնորհային ծրագրի համակարգող Տ. Գևորգյանը մասնակցել են ք. Վիլնյուսում (Լիտվա) կայացած Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության վերաբերյալ ուսուցողական այցին,
- ✓ 2019թ. օգոստոսի 27-29-ը ՀՀ ՎԿ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Համբարձումյանը մասնակցել է ք. Կոպենհագենում (Դանիա) կայացած Եբրոպական հարևանության գործիքի ներքո ընթացող «Շրջակա միջավայրի միասնական տեղեկատվական համակարգ – Արևելք» (ENI SEIS II East) ծրագրի շրջանակում ՇՄԵԳ ակադեմիայի ամառային դպրոցում անցկացվող «Շրջակա միջավայրի ինտեգրված գնահատում» խորագրով դասընթացին:

Տեղային սեմինարներ

- ✓ 2019թ. հուլիսի 4-ին ՀՀ ՎԿ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ Հայաստանի 5-րդ ազգային զեկույցի նախագծի քննարկմանը,
- ✓ 2019թ. հուլիսի 4-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը, ՀՀ ՎԿ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը և «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASAT դրամաշնորհային ծրագրի համակարգող Տ. Գևորգյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Հայաստանում որդու նախընտրության վարքաբանական և դիրքորոշումների չափումներ» էքսպերիմենտալ հետազոտության արդյունքների ներկայացում և դրան հաջորդող քննարկմանը,
- ✓ 2019թ. հուլիսի 9-ին ՀՀ ՎԿ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը և նույն բաժնի գլխավոր մասնագետ Ս. Հունանյանը մասնակցել են ք. Երևանում կայացած ՀՀ զբաղվածության 2019-2023թթ. ռազմավարության նախագծի մշակման վերաբերյալ սեմինար-քննարկմանը,
- ✓ 2019թ. հուլիսի 10-ին ՀՀ ՎԿ ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիգյանը, մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի գլխավոր մասնագետ Ս. Խաչատրյանը և բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ Ա. Դաշյանը մասնակցել են ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած ԵԱՏՄ անդամ պետությունների տնտեսական զարգացման կայունությունը որոշող մակրոտնտեսական ցուցանիշների հաշվարկման աշխատանքային խմբի 15-րդ նիստին,
- ✓ 2019թ. հուլիսի 10-11-ը ՀՀ ՎՊԽ անդամներ Ա. Սաֆյանը և Ն. Բաղդասարյանը, ՀՀ ՎԿ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ն. Մանդայանը և նույն բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Համբարձումյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Պարենի գյուղատնտեսության կազմակերպության պատասխանատվության ներքո ջրօգտագործմանն առնչվող ԿԶՆ-ի 6.4.1 և 6.4.2 ցուցանիշներ» թեմայով Հայաստանում ԿԶՆ իրազեկվածության բարձրացման աշխատաժողովին/դասընթացին,

- ✓ 2019թ. հուլիսի 11-ին ՀՀ ՎՊԽ անդամներ Ա. Սաֆյանը և ՀՀ ՎԿ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Կանանց տնտեսական գործունեության զարգացումը Հարավային Կովկասում» ծրագրի շահագրգիռ կողմերի առաջին հանդիպմանը,
- ✓ 2019թ. հուլիսի 16-ին ՀՀ ՎԿ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման» կոնվենցիայի իրականացման շրջանակներում պատրաստվող Հայաստանի Ազգային զեկույցը նախապատրաստող միջգերատեսչական աշխատանքային խմբի առաջին նիստին,
- ✓ 2019թ. հուլիսի 18-ին ՀՀ ՎԿ գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը և վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Ք. Պողոսյանը մասնակցել են ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած «Կանխատեսում» ուղղությամբ ագրոարդյունաբերական համալիրի գծով ԵԱՏՀ Խորհրդատվական կոմիտեի աշխատանքային խմբի նիստին,
- ✓ 2019թ. հուլիսի 18-19-ը ՀՀ ՎՊԽ անդամ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Աղվերանում կայացած «Կլիմայի փոփոխության ոլորտում զենդերային վերլուծության և պլանավորման մեթոդաբանական հիմքերը» խորագրով սեմինարին,
- ✓ 2019թ. հուլիսի 18-20-ը ՀՀ ՎԿ ֆինանսների վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Լ. Ասլանյանը մասնակցել է ք. Աղվերանում կայացած «Տարածքային զարգացման ռազմավարական կառավարում» մասնագիտական զարգացման ծրագրի 2-րդ դասընթացին,
- ✓ 2019թ. հուլիսի 19-ին ՀՀ ՎԿ միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Հ. Եղիազարյանը, որակի կառավարման բաժնի պետ Ռ. Շաբոյանը, վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Ք. Պողոսյանը և նույն բաժնի գլխավոր մասնագետ Կ. Շահբազյանը մասնակցել են ք. Երևանում կայացած ՀՀ ապրանքների արտաքին և փոխադարձ առևտրի վիճակագրության առջև ծառայած խնդիրներին և ոլորտի կարգավորման ուղիների որոշմանը նվիրված ֆորսայթ-նիստին,
- ✓ 2019թ. հուլիսի 25-ին ՀՀ ՎՊԽ անդամ Վ. Դավթյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «OddEye» ընկերության ներկայացուցիչների հետ հանդիպմանը,

- ✓ 2019թ. օգոստոսի 2-6-ին ՀՀ ՎԿ տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ Ա. Մարտիրոսյանը, բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ Վ. Արևշատյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետ Ն. Գրիգորյանը և տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ Կ. Եսայանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Քանակական հետազոտություն. ընտրանք, տվյալների վերլուծություն և վիզուալացում» հասարակագիտական հետազոտությունների ամառային դպրոց 2019-ին,
- ✓ 2019թ. օգոստոսի 5-ին ՀՀ ՎԿ վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Ք. Պողոսյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետ Կ. Շագբազյանը, մակրոտնտեսական ցուվանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը և նույն բաժնի առաջին կարգի մասնագետ Ս. Մովսիսյանը մասնակցել են ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած ԵԱՏՄ ինտեգրացիոն կարողությունների ձևավորման և գնահատման նպատակով պետական և միջպետական «Ծախսեր-թողարկում» աղյուսակների օգտագործման գծով փորձագիտական խմբի 9-րդ նիստին,
- ✓ 2019թ. օգոստոսի 6-ին ՀՀ ՎԿ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Հակոբյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Երեխաների նկատմամբ բռնության կանխարգելման և արձագանքման գործողությունների նախագծի քննարկմանը նվիրված Անչափահասների արդարադատության խորհրդի նիստին,
- ✓ 2019թ. օգոստոսի 28-29-ը ՀՀ ՎԿ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած EU-SMEDA ծրագրի «Մտածիր առանց սահմանի, մտածիր ապագայի մասին» խորագրով Կին ձեռներեցների աշխատաժողովին,
- ✓ 2019թ. օգոստոսի 29-ին ՀՀ ՎԿ ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիզյանը մասնակցել է ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած ԵԱՏՀ Վիճակագրության գծով Խորհրդատվական կոմիտեի ֆինանսների վիճակագրության ենթակոմիտեի նիստին,

- ✓ 2019թ. օգոստոսի 29-30-ը ՀՀ ՎԿ նախագահ Ս. Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը, ՀՀ ՎԿ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Հ. Սիմոնյանը և երկրորդ կարգի մասնագետ Ֆ. Ղազարյանը մասնակցել են ք. Երևանում ՅՈՒՆԵՍԿՕ-ի վիճակագրական ինստիտուտի «Կայուն զարգացման նպատակներ 4-Կրթություն 2030»-ի ցուցանիշների մշակման Տեխնիկական համագործակցության խմբի (TCG) վեցերորդ հանդիպմանը: